ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշատի 1

№ 1241-Ա « 03 » ապրիլի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍԻՐԱՐՓԻ ՀԱՅԿԱԶՅԱՆԻՆ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄԱԴՐԻԴ, ՎԱԼԵՆՍԻԱ ՔԱՂԱՔ ԵՎ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԼԻՍԱԲՈՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով քաղաքապետի տեղակալ Սարգիս Մադաթյանի 31.03.2025 թվականի Ն/16488-25 գրությունը և Ասիական զարգացման բանկի քաղաքաշինության գծով ավագ մասնագետ Քրիստինա Կատիչի հրավերը՝ Իսպանիայում և Պորտուգալիայում անցկացվելիք ԱԶԲ-Իսպանիա-Պորտուգալիա ջրային ուսուցման շաբաթին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանին 2025 թվականի ապրիլի 6-ից 12-ը ներառյալ գործուղել Իսպանիայի Թագավորության մայրաքաղաք Մադրիդ, Վալենսիա քաղաք և Պորտուգալիայի Հանրապետության մայրաքաղաք Լիսաբոն:

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Սիրարփի Հայկազյանի բացակայության ընթացքում պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Գորիկ Ավետիսյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246